Արձանագրություն N 2

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ **ծածկագրով ընթացակարգի**

գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 07 սեպտեմբերի 2022թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյան

Հանձնաժողովի անդամներ Գ. Մելիքսեթյանը, Ս. Ասրյանը, Ս. Միրոյանը, Ն. Ավետյանը, Կ. Սարգսյանը և Ս. Ալեքսանյանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. «**ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ** » ծածկագրով ընթացակարգի վերաբերյալ:

Հայտերի բացման մասին

Ջրային կոմիտեի կարիքների համար Բուսաբանական այգու ոռոգման ցանց Սարկավագի փողոցի վրայի ջրանցքից մինչև Բուսաբանական այգու պարսպի հատվածում՝ ոռոգման խողովակաշարերի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի օգոստոսի 29-ին, ժամը 15:30-ին /հրապարակումը 19.08.2022թ./:

Գնման ընթացակարգը կազմակերպվել է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն:

Սահմանված ժամկետում www.armeps.am **կայքի միջոցով «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով ընթացակարգի գնման հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)**

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	էլեկտրոնային հասցե
«ՌԻՋԻԴ» ՍՊԸ	ՀՀ Գեղարքունիկի մարզ, գ. Գեղամավան 2-րդ փ. 3-րդ նրբ. 25տ. հեռ. 093355787	rigidalgroup@gmail.com
«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	ՀՀ Արարատի մարզ, գ. Ոստան, Թեհլերյան 14 հեռ. 043 600090	gritig@inbox.ru
Ա/Ձ Արտակ Մարտիրոսյան	Գեղարքունիքի մարզ, գ.Գեղաքար, 2 փողոց, 4 տուն	artak.martirosyan.2022@inbox.ru

Մասնակցի (ների) գնային առաջարկը

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը

Չափաբաժին 1 Նախահաշվային արժեք – 3 582 800 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) որակի տեխնիկական հսկողության ծառայություններ - Բուսաբանական այգու պարսպի հատվածում՝ ոռոգման խողովակաշարերի կառուցման աշխատանքների կատարման				
1	«ՌԻՋԻԴ» ՍՊԸ	3 000 000	-	3 000 000
2	«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ	3 582 800	-	3 582 800
3	Ա/Ձ Արտակ Մարտիրոսյան	3 582 800	-	3 582 800

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը

ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ ծածկագրով ընթացակարգի մասնակից ընկերությունների կողմից ներկայացված չեն՝ սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը, <<Աշխատանքային ռեսուրսներ>> և «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթերը:

31.08.2022թ, գնահատող հանձնաժողովը կասեցել է նիստը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այն է՝ 01.09.2022թ. առաջարկել մասնակից ընկերություններիոն շտկել անհամապատասխանությունները (անհրաժեշտ է ներկայացնել հրավերով նախատեսված լիցենզիայի ներդիրի պատճենը, Աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշով սահմանված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունների բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները, Մասնագիտական փորձառություն չափանիշի հրավերով պահանջվող փաստաթղթերը):

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար Բուսաբանական այգու ոռոգման ցանց Սարկավագի փողոցի վրայի ջրանցքից մինչև Բուսաբանական այգու պարսպի հատվածում՝ ոռոգման խողովակաշարերի կառուցման աշխատանքների կատարման որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ» ծածկագրով ընթացակարգի մասնակից «ՌԻՋԻԴ», «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ների և Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են շտկված փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերով ընթացակարգի մասնակից «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել է արձանագրված անհամապատասխանությունները, իսկ «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից թերի են շտկվել արձանագրված անհամապատասխանությունները:

«ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել լիցենզիան /ներդիրը/ և Մասնագիտական փորձառություն չափանիշի հրավերով պահանջվող փաստաթղթերը /նմանատիպ պայմանագիր/:

Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից ներկայացված Մասնագիտական փորձառություն չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրի հիդրոտեխնիկական մասը չի բավարարում հայտով սահմանված գնային առաջարկի առնվազն 50% -ի պահանջին:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. Հիմք ընդունելով ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ ծածկագրով հրավերի 8.10 կետը «ԳՐԻՏԻԳ» ՍՊԸ-ի և Ա/Ձ Արտակ Մարտիրոսյանի կողմից Զափաբաժին 1-ի համար ներկայացված հայտերը մերժել:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետը, ինչպես նաև ՋԿ-ԳՀԾՁԲ-22/11-Տ ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.6 և 8.7 կետերը հանձնաժողովը հրավերի մասնակից «ՌԻՋԻԴ» ՍՊԸ-ին հրավիրում է գնի նվազեցման շուրջ բանակցությունների, որը տեղի կունենա 13.09.2022 թվականին ժամը 11:30-ին, Ջրային կոմիտեի շենքում (ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ):

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-7, դեմ-0

Նախագահ		Վ. Օհանջանյան
		Ս. Ասրյան
անդամներ		Գ. Մելիքսեթյան
		Կ. Սարգսյան
		Ս. Միրոյան
		Ն. Ավետյան
		Ս. Ալեքսանյան
Քարտուղար		Ա. Սարգսյան